

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

### ԶԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

### ՀԱՆՁՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Զինաստանի Ժողովրդական Հանրապետությունը (այսուհետ՝ Կողմեր),

ցանկանալով խթանել հանցագործության կանխման գործում Կողմերի միջև արդյունավետ համագործակցությունը՝ հիմնված ինքնիշխանության փոխադարձ հարգման, հավասարության և փոխադարձ շահի վրա,

որոշեցին կնքել սույն Պայմանագիրը և համաձայնեցին հետևյալի մասին.

#### Հոդված 1

##### Հանձնման պարտավորությունը

Յուրաքանչյուր Կողմ, սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան և Հայցող Կողմի պահանջով, պարտավորվում է մյուս Կողմին հանձնել իր տարածքում հայտնաբերված և Հայցող Կողմի կողմից հետախուզվող ցանկացած անձի՝ այդ անձի նկատմամբ քրեական վարույթ իրականացնելու կամ նշանակված պատիժն ի կատար ածելու նպատակով:

#### Հոդված 2

##### Հանձնման համար հիմք հանդիսացող հանցանքները

1. Հանձնման մասին հարցումը կարող է բավարարվել միայն այն դեպքում, եթե արարքը, որի համար հանձնում է պահանջվում, համարվում է հանցանք երկու Կողմերի օրենքներով, և եթե առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը.

ա) հանձնման մասին հարցումը կատարվել է այնպիսի հանցանքի համար քրեական վարույթ իրականացնելու նպատակով, որը երկու Կողմերի օրենքներով պատժելի է ազատազրկմամբ նվազագույնը մեկ տարի ժամկետով կամ ցանկացած ավելի խիստ պատժով կամ

բ) հանձնման մասին հարցումը կատարվել է ազատազրկման ձևով պատիժն ի կատար ածելու նպատակով, եթե պատժի մնացած ժամկետը, որը հետախուզման մեջ

գտնվող անձը պետք է կրի, հանձնման մասին հարցում ներկայացնելու պահին առնվազն վեց ամիս է:

2. Տվյալ հանցանքը երկու Կողմերի օրենքներով պատժելի հանցանք լինելու հարցը որոշելիս՝

ա) հաշվի չպետք է առնել Կողմերի օրենքները տվյալ հանցանքը կազմող գործողությունները կամ անգործությունը հանցանքների նույն տեսակի՞ն են դասում կամ հանցանքը նույն տերմինաբանությամբ են անվանում, թե՞ ոչ:

բ) պետք է հաշվի առնել գործողությունների և անգործության ամբողջությունը, ինչպես ներկայացված է հայցող պետության կողմից՝ անկախ այն հանգամանքից՝ Կողմերի օրենքներով հանցանքի բաղկացուցիչ տարրերը տարբերվո՞ւմ են, թե՞ ոչ:

3. Եթե հանձնման մասին հարցումը վերաբերում է երկու կամ ավել այնպիսի արարքների, որոնցից յուրաքանչյուրը հանցանք է համարվում երկու Կողմերի օրենքներով, և դրանցից առնվազն մեկը բավարարում է սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված պայմանները, Հայցվող Կողմը կարող է բավարարել բոլոր այդ արարքների առնչությամբ ներկայացված՝ հանձնման մասին հարցումը:

### **Հոդված 3**

#### **Մերժման պարտադիր հիմքերը**

Հանձնումը մերժվում է, եթե.

ա) Հայցվող Կողմը համարում է, որ այն հանցանքը, որի համար հանձնումը պահանջվում է, քաղաքական հանցանք է, կամ եթե Հայցվող Կողմն ապաստան է տվել հետախուզման մեջ գտնվող անձին: Սակայն ահաբեկչական հանցագործությունը կամ այն հանցանքը, որը քաղաքական հանցանք չի համարվում որևէ միջազգային կոնվենցիայով, որի կողմեր են երկու Կողմերը, քաղաքական հանցանքներ չեն համարվում:

բ) Հայցվող Կողմը լուրջ հիմքեր ունի ենթադրելու, որ հանձնման մասին հարցումը ներկայացվել է հետախուզման մեջ գտնվող անձին այդ անձի ռասայական պատկանելության, սեռի, դավանանքի, քաղաքացիության կամ քաղաքական հայացքների պատճառով հետապնդելու կամ պատժելու համար, կամ որ դատական վարույթի ժամանակ անձին կարող է վնաս հասցվել նշված պատճառներից որևէ մեկի հետևանքով:

գ) հանցանքը, որի համար պահանջվում է հանձնումը, միայն զինվորական հանցագործություն է:

դ) հետախուզման մեջ գտնվող անձը, որևէ Կողմի օրենքների համաձայն, ունի անձեռնմխելիություն քրեական հետապնդումից կամ իր նկատմամբ պատիժն ի կատար ածելուց որևէ պատճառով, ներառյալ՝ վաղեմության ժամկետն անցնելու, համաներման կամ ներման:

ե) Հայցվող Կողմը վերջնական դատավճիռն արդեն կայացրել է կամ դադարեցրել է հետախուզման մեջ գտնվող անձի նկատմամբ հարուցված քրեական վարույթն այն հանցանքի առնչությամբ, որի համար հանձնումը պահանջվել է.

զ) հանձնման մասին հարցման բավարարումը կարող է վտանգել Հայցվող Կողմի ինքնիշխանությունը, անվտանգությունը, հասարակական կարգը կամ այլ էական շահը կամ առաջացնել իր ներպետական օրենսդրության հիմնարար սկզբունքներին հակասող ազդեցություն՝ ներառյալ այնպիսի պատժի տեսակի կատարումը, որն արգելված է Հայցվող Կողմի օրենքներով.

է) հետախուզման մեջ գտնվող անձը Հայցող Կողմի տարածքում ենթարկվել է կամ հնարավոր է ենթարկվի խոշտանգման կամ այլ՝ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի.

ը) Հայցող Կողմը հանձնման մասին հարցումը ներկայացնում է հետախուզման մեջ գտնվող անձի բացակայությամբ կայացված դատավճիռն համապատասխան, մինչև Հայցող Կողմը ներկայացնի երաշխիքներ առ այն, որ հետախուզվող անձը կունենա իր ներկայությամբ վերստին դատաքննություն ունենալու հնարավորություն:

#### **Հոդված 4**

##### **Մերժման հայեցողական հիմքերը**

Հանձնումը կարող է մերժվել, եթե.

ա) Հայցվող Կողմը, իր ազգային օրենսդրությանը համապատասխան, ունի քրեական իրավագործություն այն հանցանքի նկատմամբ, որի համար հանձնումը պահանջվում է, և տվյալ հանցանքի համար քրեական վարույթ է իրականացնում հետախուզման մեջ գտնվող անձի նկատմամբ կամ ունի նրա դեմ քրեական վարույթ հարուցելու մտադրություն.

բ) Հայցվող Կողմը, հիմք ընդունելով հանցանքի լրջությունը և Հայցող Կողմի շահերը, համարում է, որ հանձնումն անհամատեղելի կլինի մարդասիրական նկատառումների հետ՝ հաշվի առնելով անձի տարիքը, առողջական վիճակը կամ անձնական այլ հանգամանքներ:

#### **Հոդված 5**

##### **Քաղաքացիների հանձնումը մերժելը**

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է իր հայեցողությամբ մերժել իր քաղաքացիների հանձնումը:

2. Եթե հանձնման մասին հարցումը մերժվել է սույն հոդվածի 1-ին կետի համաձայն, Հայցվող Կողմը Հայցող Կողմի կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում գործը հանձնում է իր իրավասու մարմիններին՝ այդ անձի դեմ, իր ազգային օրենսդրության համաձայն, քրեական վարույթ հարուցելու նպատակով: Այդ նպատակով

Հայցող Կողմը Հայցվող Կողմին տրամադրում է գործին առնչվող փաստաթղթերն ու ապացույցները:

### **Հոդված 6**

#### **Հաղորդակցության ուղիները**

Սույն Պայմանագրի նպատակների համար հանձնման հարցումները պետք է փոխանցվեն և բոլոր այլ հաղորդակցությունները Կողմերի իրավասու մարմինների միջև պետք է իրականացվեն դիվանագիտական ուղիներով:

### **Հոդված 7**

#### **Հանձնման մասին հարցումը և անհրաժեշտ փաստաթղթերը**

1. Հանձնման մասին հարցումը պետք է ներկայացվի գրավոր և ներառի հետևյալ տեղեկությունները կամ ներկայացվի ներքոշարադրյալ տեղեկությունները պարունակող փաստաթղթերին կից.

ա) հայցող մարմնի անվանումը.

բ) հետախուզման մեջ գտնվող անձի անունը, տարիքը, սեռը, քաղաքացիությունը, անձը հաստատող փաստաթղթերի համարները, զբաղմունքը, մշտական բնակության կամ գտնվելու վայրը և այլ տեղեկություններ, որոնք կարող են օգնել՝ պարզելու համար այդ անձի ինքնությունը և նրա գտնվելու հնարավոր վայրը, և, առկայության դեպքում, այդ անձի արտաքին նկարագրությունը, լուսանկարները և այդ անձի մատնահետքերը.

գ) հանցագործության հանգամանքների շարադրանքը՝ ներառյալ հանցանքի կատարման ժամանակը, վայրը, եղանակը և հետևանքները.

դ) քրեական իրավագործությանը, հանցագործության քրեականացմանը և դրա համար նախատեսված պատժին վերաբերող օրենքների դրույթները և

ե) քրեական հետապնդման կամ դատավճիռն ի կատար ածելու վաղեմության ժամկետներին վերաբերող օրենքների դրույթները:

2. Ի լրումն սույն հոդվածի 1-ին կետի դրույթների՝

ա) հետախուզման մեջ գտնվող անձի նկատմամբ քրեական վարույթ իրականացնելու նպատակով ներկայացված հանձնման մասին հարցման հետ ներկայացվում է նաև Հայցող Կողմի իրավասու մարմնի կողմից տրված՝ ձերբակալման (կալանավորման) մասին որոշման պատճենը.

բ) հետախուզման մեջ գտնվող անձի նկատմամբ նշանակված պատիժն ի կատար ածելու նպատակով ներկայացված հանձնման մասին հարցման հետ ներկայացվում են նաև վերջնական վճռի պատճենը և արդեն իսկ կրած պատժի ժամկետի մասին տեղեկությունները:

3. Հայցող Կողմի կողմից սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան ներկայացված հանձնման մասին հարցման նամակը և այլ համապատասխան փաստաթղթերը պաշտոնապես ստորագրվում կամ կնքվում են Հայցող Կողմի իրավասու

մարմնի կողմից և ուղեկցվում են Հայցվող Կողմի լեզվով կամ անգլերեն թարգմանություններով:

### **Հոդված 8**

#### **Լրացուցիչ տեղեկությունները**

Եթե Հայցվող Կողմը համարում է, որ հանձնման մասին հարցման հիմնավորման համար տրամադրված տեղեկությունները բավարար չեն, Կողմը կարող է պահանջել երեսնօրյա ժամկետում տրամադրել լրացուցիչ տեղեկություններ: Հայցող Կողմի հիմնավոր խնդրանքով՝ այդ ժամկետը կարող է երկարաձգվել տասնհինգ օրով: Եթե Հայցող Կողմը լրացուցիչ տեղեկությունները չի ներկայացնում այդ ժամկետում, համարվում է, որ նա իր պահանջից ինքնակամ հրաժարվել է: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ Հայցող Կողմը չի կարող նույն հանցանքի համար նույն անձին հանձնելու մասին նոր հարցում ներկայացնել:

### **Հոդված 9**

#### **Հաստատում կամ նույնականացում**

Բացառությամբ սույն Պայմանագրով նախատեսված դեպքերի՝ 6-րդ հոդվածով նախատեսված ուղիով փոխանցված հանձնման մասին հարցման և դրան կից փաստաթղթերի, ինչպես նաև նման հարցմանն ի պատասխան ներկայացված փաստաթղթերի և այլ նյութերի համար հաստատում կամ նույնականացում չի պահանջվում:

### **Հոդված 10**

#### **Ժամանակավոր կալանավորումը**

1. Կողմերից մեկը նախքան հանձնման մասին հարցում ներկայացնելը կարող է միջնորդություն ներկայացնել մյուս Կողմին հետախուզման մեջ գտնվող անձին ժամանակավոր կալանավորելու վերաբերյալ: Այդպիսի միջնորդությունը կարող է ներկայացվել գրավոր՝ սույն Պայմանագրի 6-րդ հոդվածով նախատեսված ուղիներով, Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության (ԻՆՏԵՐՊՈԼԻ) կամ երկու Կողմերի պայմանավորված այլ ուղիներով:

2. Ժամանակավոր կալանավորելու մասին միջնորդությունը պետք է պարունակի սույն Պայմանագրի 7-րդ հոդվածի 1-ին կետում նշված տեղեկությունները, 7-րդ հոդվածի 2-րդ կետում նշված փաստաթղթերի առկայությունը հավաստող տեղեկությունը և տեղեկություն, որ հետախուզման մեջ գտնվող անձի հանձնման մասին պաշտոնական հարցումը կներկայացվի լրացուցիչ:

3. Հայցվող Կողմն անհապաղ տեղեկացնում է Հայցող Կողմին հարցման ընթացքի արդյունքների մասին:

4. Ժամանակավոր կալանավորումը դադարեցվում է, եթե հետախուզման մեջ գտնվող անձի կալանավորումից հետո՝ երեսնօրյա ժամկետում, Հայցվող Կողմը չի ստանում հանձնման մասին պաշտոնական հարցում: Հայցող Կողմի հիմնավոր խնդրանքով՝ այդ ժամկետը կարող է երկարաձգվել տասն օրով:

5. Ժամանակավոր կալանավորումը սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան դադարեցնելը չպետք է խոչընդոտի հետախուզման մեջ գտնվող անձի հանձնմանը, եթե Հայցվող Կողմը հետագայում ստանա հանձնման մասին պաշտոնական հարցում:

## **Հոդված 11**

### **Հանձնման մասին հարցման վերաբերյալ որոշումը**

1. Հայցվող Կողմը հանձնման մասին հարցումը քննարկում է իր ազգային օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերին համապատասխան և իր որոշման մասին անհապաղ տեղեկացնում է Հայցող Կողմին:

2. Եթե Հայցվող Կողմն ամբողջությամբ կամ մասամբ մերժում է հանձնման մասին հարցումը, մերժման պատճառների մասին ծանուցում է Հայցող Կողմին:

## **Հոդված 12**

### **Հանձնման ենթակա անձի հանձնումը**

1. Եթե Հայցվող Կողմը բավարարում է հանձնման հարցումը, Կողմերը, առանց անհարկի ուշացման, պայմանավորվում են հանձնումն իրականացնելու ժամանակի, տեղի և հանձնմանն առնչվող այլ համապատասխան հարցերի մասին: Միևնույն ժամանակ Հայցվող Կողմը տեղեկացնում է Հայցող Կողմին, թե նախքան հանձնումը հանձնման ենթակա անձը որքան ժամանակ է պահվել կալանքի տակ:

2. Եթե Հայցող Կողմը հանձնումն իրականացնելու համար պայմանավորված ժամկետից հետո՝ տասնհինգ օրվա ընթացքում, չի տեղափոխում հանձնման ենթակա անձին, Հայցվող Կողմը նրան անհապաղ ազատում է և կարող է մերժել Հայցող Կողմի՝ նույն հանցանքի համար այդ անձին հանձնելու մասին նոր հարցումը, եթե այլ բան նախատեսված չէ սույն հոդվածի 3-րդ կետով:

3. Եթե մի Կողմը պայմանավորված ժամկետում հանձնման ենթակա անձին չի հանձնում կամ չի տեղափոխում իր կամքից անկախ պատճառներով, մյուս Կողմը պետք է անհապաղ ծանուցվի: Կողմերը կրկին պայմանավորվում են հանձնումն իրականացնելու հետ կապված համապատասխան հարցերի շուրջ, և կիրառվում են սույն հոդվածի 2-րդ կետի դրույթները:

### **Հոդված 13**

#### **Վերահանձնելը**

Եթե հանձնման ենթակա անձը նախքան Հայցող Կողմի տարածքում քրեական վարույթի դադարելը կամ իր պատիժն ամբողջությամբ կրելը փախուստի է դիմում՝ վերահանձնելով Հայցվող Կողմի տարածք, այդ անձը կարող է վերահանձնվել Հայցող Կողմի կողմից նույն հանցանքի առնչությամբ ներկայացվող՝ հանձնման մասին նոր հարցման դեպքում, և Հայցող Կողմը կարող է չներկայացնել սույն Պայմանագրի 7-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերն ու նյութերը:

### **Հոդված 14**

#### **Հանձնման հետաձգումը և ժամանակավոր հանձնումը**

1. Եթե հետախուզման մեջ գտնվող անձի նկատմամբ Հայցվող Կողմում հարուցված է քրեական հետապնդում, կամ այդ անձը պատիժ է կրում ոչ այն հանցանքի համար, որով նրան հանձնելու հարցում է ներկայացվել, Հայցվող Կողմը կարող է հանձնման մասին հարցումը բավարարելու մասին որոշում կայացնելուց հետո հետաձգել նրա հանձնումը մինչև վարույթը կամ պատժի կրումն ավարտվելը: Հայցվող Կողմը հետաձգման մասին տեղեկացնում է Հայցող Կողմին:

2. Եթե հանձնումը հետաձգելը կարող է լրջորեն խոչընդոտել Հայցող Կողմի տարածքում իրականացվող քրեական վարույթին, Հայցվող Կողմը կարող է, հարցում ստանալուն պես և այնքանով, որքանով դա չի խոչընդոտում ընթացող քրեական վարույթին, հետախուզման մեջ գտնվող անձին ժամանակավոր հանձնել Հայցող Կողմին՝ պայմանով, որ Հայցող Կողմը համապատասխան վարույթն ավարտելուց հետո անվերապահորեն և անհապաղ կվերադարձնի այդ անձին:

### **Հոդված 15**

#### **Մի քանի պետությունից ստացված՝ հանձնման մասին հարցումները**

Եթե երկու կամ ավելի պետություններ, ներառյալ սույն Պայմանագրի Կողմերից որևէ մեկը, նույն անձին նույն հանցանքը կամ տարբեր հանցանքներ կատարելու համար հանձնման մասին հարցումներ են ներկայացրել, Հայցվող Կողմը, որոշելու համար, թե ո՞ր պետությանը պետք է հանձնի այդ անձին, դիտարկում է առնչվող բոլոր հանգամանքները, մասնավորապես՝

- ա) արդյո՞ք հարցումները ներկայացվել են պայմանագրի համաձայն,
- բ) տարբեր հանցանքների ծանրության աստիճանը,
- գ) հանցանքի կատարման ժամանակը և վայրը,
- դ) հետախուզման մեջ գտնվող անձի քաղաքացիությունը և հիմնական բնակության վայրը,

- ե) հարցումների ներկայացման համապատասխան ամսաթվերը,
- զ) հետազայում որևէ երրորդ պետության հանձնելու հնարավորությունը:

## Հոդված 16

### Առանձնահատուկ կանոններ

Սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան հանձնված անձի նկատմամբ Հայցող Կողմում չի կարող քրեական հետապնդում իրականացվել կամ պատիժն ի կատար ածվել մինչև նրան հանձնելն այդ անձի կողմից կատարված այն հանցանքի համար, որով հանձնելու հարցում չի ներկայացվել, ինչպես նաև այդ անձը չի կարող հանձնվել որևէ երրորդ պետության, եթե միայն.

ա) Հայցվող Կողմը նախապես չի տվել իր համաձայնությունը: Նման համաձայնությունը տալու համար Հայցվող Կողմը կարող է պահանջել, որ ներկայացվեն սույն Պայմանագրի 7-րդ հոդվածում նշված փաստաթղթերն ու տեղեկությունները և տվյալ հանցանքի հետ կապված՝ հանձնված անձի հայտարարությունը,

բ) այդ անձը երեսուն օրվա ընթացքում չի հեռացել Հայցող Կողմի տարածքից դրա հնարավորությունը ունենալուց հետո: Այնուամենայնիվ, նշված ժամկետի մեջ չի ներառվում այն ժամանակը, որի ընթացքում այդ անձը, իր կամքից անկախ հանգամանքներով, չէր կարող հեռանալ Հայցող Կողմի տարածքից, կամ

գ) հեռանալուց հետո այդ անձն ինքնակամ չի վերադարձել Հայցող Կողմի տարածք:

## Հոդված 17

### Գույքի հանձնումը

1. Հայցող Կողմից պահանջ ներկայացվելու դեպքում Հայցվող Կողմն իր ազգային օրենսդրության թույլատրելիության սահմաններում առգրավում է հանցագործության արդյունքում ձեռք բերված միջոցները և հանցագործության գործիքներն ու այլ գույք, որոնք կարող են օգտագործվել որպես իր տարածքում գտնված ապացույցներ, և հանձնման մասին հարցումը բավարարելու դեպքում այդ գույքը հանձնում է Հայցող Կողմին:

2. Երբ հանձնման մասին հարցումը բավարարվում է, սույն հոդվածի 1-ին կետում նշված գույքը, այնուամենայնիվ, կարող է հանձնվել, եթե անգամ հանձնումը հնարավոր չէ իրականացնել հետախուզման մեջ գտնվող անձի մահվան, անհետացման կամ փախուստի պատճառով:

3. Հայցվող Կողմը կարող է արդեն իսկ հարուցված ցանկացած այլ քրեական վարույթ իրականացնելու համար հետաձգել վերոնշյալ գույքի հանձնումը՝ մինչև նշված վարույթն ավարտվելը, կամ ժամանակավորապես հանձնել այդ գույքը՝ պայմանով, որ Հայցող Կողմը կպարտավորվի այն վերադարձնել:



4. Նման գույքը հանձնելով՝ չպետք է ոտնահարվի Հայցվող Կողմի կամ երրորդ կողմի՝ այդ գույքի նկատմամբ ունեցած որևէ օրինական իրավունք կամ շահ: Նշված իրավունքների կամ շահերի առկայության դեպքում Հայցող Կողմը վարույթն ավարտելուց հետո՝ հնարավորինս շուտ, անհատույց վերադարձնում է փոխանցված գույքը Հայցվող Կողմին կամ երրորդ կողմին:

## **Հոդված 18**

### **Տարանցիկ փոխադրումը**

1. Եթե մի Կողմը պետք է անձին երրորդ պետությանը հանձնի մյուս Կողմի տարածքով, ապա պետք է դիմի մյուս Կողմին նման տարանցիկ փոխադրման թույլտվություն համար: Նման թույլտվությունն անհրաժեշտ չէ, եթե օդային փոխադրամիջոց է օգտագործվում, և մյուս Կողմի տարածքում կանգառ չի նախատեսվում:

2. Հայցվող Կողմը, այնքանով, որքանով դա չի հակասում իր ազգային օրենսդրությանը, բավարարում է տարանցիկ փոխադրման համար Հայցող Կողմի ներկայացրած դիմումը:

## **Հոդված 19**

### **Արդյունքի մասին ծանուցելը**

Հայցող Կողմը Հայցվող Կողմի հարցումն ստանալուն պես անհապաղ տեղեկություններ է ներկայացնում Հայցվող Կողմին հանձնված անձի նկատմամբ իրականացվող վարույթի կամ պատիժն ի կատար ածելու կամ այդ անձին երրորդ պետությանը հանձնելու մասին:

## **Հոդված 20**

### **Ծախսերը**

Հայցվող Կողմի տարածքում հանձնման հետ կապված ընթացակարգերի կատարումից առաջացած ծախսերը կրում է այդ Կողմը: Հանձնման ենթակա անձի հանձնման կամ ընդունման հետ կապված՝ տրանսպորտային և տարանցիկ փոխադրման ծախսերը կրում է Հայցող Կողմը:

## **Հոդված 21**

### **Այլ պայմանագրերի հետ առնչությունը**

Սույն Պայմանագիրը Կողմերին չի խոչընդոտում հանձնման շուրջ միմյանց հետ համագործակցել՝ այլ պայմանագրերի համապատասխան, որոնց կողմ են երկու Կողմերը:

## Հոդված 22

### Վեճերի կարգավորումը

Սույն Պայմանագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած վեճ կարգավորվում է դիվանագիտական ուղիներով անցկացվող բանակցությունների միջոցով:

## Հոդված 23

### Ուժի մեջ մտնելը, փոփոխությունները և դադարեցնելը

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է մյուս Կողմին դիվանագիտական հայտագրով տեղեկացնի, որ իր օրենքների շրջանակներում արվել են սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր քայլերը: Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում վերջին դիվանագիտական հայտագիրը ստանալու օրվանից հետո՝ երեսուներորդ օրը:

2. Յուրաքանչյուր Կողմի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ սույն Պայմանագիրը կարող է փոփոխվել և/կամ լրացվել: Բոլոր փոփոխությունները և/կամ լրացումները կձևակերպվեն առանձին արձանագրություններով: Արձանագրություններն ուժի մեջ կմտնեն սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով և կհամարվեն սույն Պայմանագրի անբաժանելի մասը:


3. Յուրաքանչյուր Կողմ կարող է ցանկացած ժամանակ դադարեցնել սույն Պայմանագրի գործողությունը՝ այդ մասին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելով: Պայմանագրի գործողությունը դադարում է ծանուցումը ներկայացնելու օրվան հաջորդող հարյուրութսուներորդ օրը: Սույն Պայմանագրի դադարումը չի ազդում նախքան դադարումն սկսված հանձնման գործընթացների վրա:

4. Սույն Պայմանագիրը կիրառվում է ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված ցանկացած հարցման նկատմամբ, եթե անգամ դրան առնչվող հանցանքները կատարվել են նախքան սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելը:

**Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՎԵՐՈՇԱՐԱԴՐՅԱԼԻ՝** ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց համապատասխան Կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Պայմանագիրը:

**ԿԱՏԱՐՎԱԾ Է** Երևան քաղաքում 2019 թվականի մայիսի 26-ին, երկու բնօրինակով, հայերեն, չինարեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման հետ կապված տարաձայնություն առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ՝**



**ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝**



**TREATY**  
**BETWEEN**  
**THE REPUBLIC OF ARMENIA**  
**AND**  
**THE PEOPLE'S REPUBLIC OF CHINA**  
**ON**  
**EXTRADITION**

**The Republic of Armenia and the People's Republic of China** (hereinafter referred to as the "Parties"),

Desiring to promote the effective cooperation between the Parties in the suppression of crime on the basis of mutual respect for sovereignty, equality and mutual benefit,  
Have resolved to conclude this Treaty and agreed as follows:

**Article 1**  
**Obligation to Extradite**

Each Party undertakes to extradite to the other Party, in accordance with the provisions of this Treaty and upon request of the Requesting Party, any person found in its territory and wanted by the Requesting Party for the purpose of conducting criminal proceedings against or executing sentence imposed on that person.

**Article 2**  
**Extraditable Offences**

1. Extradition shall not be granted unless the conduct for which the extradition is sought constitutes an offence under the laws of both Parties and meets one of the following conditions:

(a) where the request for extradition is made for the purpose of conducting criminal proceedings, the offence is punishable under the laws of both Parties by the penalty of imprisonment for a period of at least one year or by any heavier penalty; or

(b) where the request for extradition is made for the purpose of executing a sentence of imprisonment, a period of sentence that remains to be served by the person sought is at least six months at the time when the request for extradition is made.

2. In determining whether an offence is an offence punishable under the laws of both Parties, it shall not matter whether:

(a) the laws of the Parties place the acts or omissions constituting the offence within the same category of offences or denominate the offence by the same terminology;

(b) under the laws of the Parties, the constituent elements of the offence differ, it being understood that the totality of the acts or omissions as presented by the Requesting Party shall be taken into account.

3. If the request for extradition concerns two or more conducts each of which constitutes offence under the laws of both Parties and at least one of which fulfills the conditions provided for in Paragraph 1 of this Article, the Requested Party may grant extradition for all of those conducts.

### **Article 3**

#### **Mandatory Grounds for Refusal**

Extradition shall be refused if:

(a) the Requested Party considers that the offence for which the extradition is requested is a political offence, or that the Requested Party has granted asylum to the person sought. But terrorism offence or the offence not being regarded as a political offence under any international convention to which both Parties are parties shall not be considered as political offences;

(b) the Requested Party has substantial grounds for believing that the request for extradition has been made for the purpose of prosecuting or punishing the person sought on account of that person's race, sex, religion, nationality or political opinion, or that the person's position in judicial proceedings may be prejudiced for any of those reasons;

(c) the offence for which the extradition is requested only constitutes a military offence;

(d) the person sought has become, under the laws of either Party, immune from prosecution or execution of sentence for any reason, including lapse of time, amnesty or pardon;

(e) the Requested Party has already rendered a final judgment or terminated the criminal proceeding against the person sought in respect of the offence for which the extradition is requested;

(f) the granting of the request for extradition could jeopardize the sovereignty, security, public order or other essential interests of the Requested Party, or cause effects in contrast with the fundamental principles of its domestic law, including the execution of a type of punishment prohibited by the laws of the Requested Party;

(g) the person sought has been or would possibly be subjected to torture or other cruel, inhuman or humiliating treatment or punishment in the Requesting Party;

(h) the request for extradition is made by the Requesting Party pursuant to a judgment rendered in absentia unless the Requesting Party guarantees that the person sought has the opportunity to have the case retried in his presence.

#### **Article 4**

#### **Discretionary Grounds for Refusal**

Extradition may be refused if:

(a) the Requested Party has criminal jurisdiction over the offence for which the extradition is requested in accordance with its national law, and is conducting or contemplates to institute a criminal proceeding against the person sought for that offence;

(b) the Requested Party, while taking into account the seriousness of the offence and the interests of the Requesting Party, considers that the extradition would be incompatible with humanitarian considerations in view of that person's age, health or other personal circumstances.

#### **Article 5**

#### **Refusal of Extradition of Nationals**

1. Each Party has discretion to refuse extradition of its nationals.
2. If extradition is not granted pursuant to Paragraph 1 of this Article, the Requested Party shall, if the Requesting Party so requests, submit the case to its competent authorities with a view to institution of criminal proceedings against the person under its national law. For this purpose, the Requesting Party shall provide the Requested Party with documents and evidence relating to the case.

#### **Article 6**

#### **Channels of Communication**

For the purpose of this Treaty, requests and all other communications shall be transmitted to competent authorities of the Parties through diplomatic channels.

#### **Article 7**

#### **Request for Extradition and Required Documents**

1. The request for extradition shall be made in written form and include or be accompanied by the following:

(a) the name of the requesting authority;

(b) the name, age, sex, nationality, number of identification documents, occupation, domicile or residence of the person sought and other information that may help to establish that person's identity and possible location, and if available, the description of that person's appearance, the photographs and fingerprints of that person;

(c) a statement of the facts of the offence, including the time, place, conduct and consequences of the offence;

(d) the provisions of the laws relating to criminal jurisdiction, criminalization and penalty of the offence; and

(e) the provisions of the laws relating to time limit on prosecution or execution of sentence.

2. In addition to the provisions of Paragraph 1 of this Article,

(a) the request for extradition which is made for the purpose of conducting criminal proceedings against the person sought shall also be accompanied by a copy of the warrant of arrest (detention) issued by the competent authority of the Requesting Party;

(b) the request for extradition which is made for the purpose of executing a sentence imposed on the person sought shall also be accompanied by a copy of final judgment and a description of period of sentence which has already been executed.

3. The letter of request for extradition and other relevant documents submitted by the Requesting Party in accordance with Paragraphs 1 and 2 of this Article shall be officially signed or sealed by the competent authority of the Requesting Party and be accompanied by translations into the language of the Requested Party or English.

## **Article 8**

### **Additional Information**

If the Requested Party considers that the information furnished in support of a request for extradition is not sufficient, the Party may request that additional information be furnished within thirty days. At a duly request by the Requesting Party, the time limit may be extended for fifteen days. If the Requesting Party fails to submit additional information within that period, it shall be considered as having renounced its request voluntarily. However, the Requesting Party shall not be precluded from making a new request for extradition of the same person for the same offence.

## **Article 9**

### **Certification or Authentication**

Except as provided by this Treaty, a request for extradition and the documents in support thereof, as well as documents or other material supplied in response to such a

request, transmitted through the channel provided by Article 6, shall not require certification or authentication.

### **Article 10** **Provisional Arrest**

1. A Party may make a request to the other Party for the provisional arrest of the person sought before making a request for extradition. Such request may be submitted in writing through the channels provided for in Article 6 of this Treaty, the International Criminal Police Organization (INTERPOL) or other channels agreed by both Parties.

2. The request for provisional arrest shall contain the contents referred to in Paragraph 1 of Article 7 of this Treaty, a statement of the existence of documents referred to in Paragraph 2 of Article 7 and a statement that a formal request for extradition of the person sought will follow.

3. The Requested Party shall, without delay, inform the Requesting Party of the result of its handling of the request.

4. Provisional arrest shall be terminated if, within a period of thirty days after the arrest of the person sought, the Requested Party has not received the formal request for extradition. At a duly request by the Requesting Party, such time limit may be extended for ten days.

5. The termination of provisional arrest pursuant to Paragraph 4 of this Article shall not prejudice the extradition of the person sought if the Requested Party has subsequently received the formal request for extradition.

### **Article 11** **Decision on the Request for Extradition**

1. The Requested Party shall handle the request for extradition in accordance with the procedures provided for by its national law, and shall promptly inform the Requesting Party of its decision.

2. If the Requested Party refuses the whole or any part of the request for extradition, the reasons for refusal shall be notified to the Requesting Party.

### **Article 12** **Surrender of the Person to be Extradited**

1. If the extradition has been granted by the Requested Party, the Parties shall without undue delay, agree on time, place and other relevant matters relating to the execution of the extradition. Meanwhile, the Requested Party shall inform the Requesting Party of the period of time for which the person to be extradited has been detained prior to the surrender.

2. If the Requesting Party has not taken over the person to be extradited within fifteen days after the date agreed for the execution of the extradition, the Requested Party shall release that person immediately and may refuse a new request by the Requesting Party for extradition of that person for the same offence, unless otherwise provided for in Paragraph 3 of this Article.

3. If one Party fails to surrender or take over the person to be extradited within the agreed period for reasons beyond its control, the other Party shall be notified promptly. The Parties shall once again agree on the relevant matters for the execution of the extradition, and the provisions of Paragraph 2 of this Article shall apply.

### **Article 13**

#### **Re-Extradition**

Where the person under extradition escapes back to the Requested Party before criminal proceedings are terminated or his sentence is served in the Requesting Party, that person may be re-extradited upon a new request for extradition made by the Requesting Party in respect of the same offence and the Requesting Party need not submit the documents and material provided for in Article 7 of this Treaty.

### **Article 14**

#### **Postponed Extradition and Temporary Extradition**

1. If the person sought is being proceeded against or is serving a sentence in the Requested Party for an offence other than that for which the extradition is requested, the Requested Party may, after having made a decision to grant extradition, postpone the extradition until the conclusion of the proceeding or the completion of the sentence. The Requested Party shall inform the Requesting Party of the postponement.

2. If the postponement of the extradition may seriously impede the criminal proceedings in the Requesting Party, the Requested Party may, upon request and to the extent that its ongoing criminal proceedings are not hindered, temporarily extradite the person sought to the Requesting Party provided that the Requesting Party undertakes to return that person unconditionally and immediately upon conclusion of the relevant proceedings.

### **Article 15**

#### **Requests for Extradition Made by Several States**

Where requests are made by two or more states including a Party to this Treaty for extradition of the same person either for the same offence or for different offences, the



Requested Party, in determining to which state the person is to be extradited, shall consider all the relevant circumstances, in particular:

- (a) whether the requests were made pursuant to a treaty;
- (b) the gravity of different offences;
- (c) the time and place of the commission of the offence;
- (d) the nationality and habitual residence of the person sought;
- (e) respective dates of submission of the requests;
- (f) the possibility of subsequent extradition to a third state.

### **Article 16** **Rule of Specialty**

The person extradited in accordance with the provisions of this Treaty shall not be proceeded against or subject to the execution of sentence in the Requesting Party for an offence committed by that person before his extradition other than that for which the extradition is granted, nor shall that person be extradited to a third State, unless

(a) the Requested Party has consented in advance. For the purpose of such consent, the Requested Party may require the submission of the documents and information referred to in Article 7 of this Treaty, and the statement by the extradited person with respect to the offence concerned;

(b) that person has not left the Requesting Party within thirty days after having been free to do so. However, this period of time shall not include the time during which that person fails to leave the Requesting Party for reasons beyond his control; or

(c) that person has voluntarily returned to the Requesting Party after leaving it.

### **Article 17** **Handover of Property**

1. If the Requesting Party so requests, the Requested Party shall, to the extent permitted by its national law, seize the proceeds and instrumentality of the offence and other property which may serve as evidence found in its territory, and when extradition is granted, shall hand over this property to the Requesting Party.

2. When the extradition is granted, the property referred to in Paragraph 1 of this Article may nevertheless be handed over even if the extradition can not be carried out owing to the death, disappearance or escape of the person sought.

3. The Requested Party may, for conducting any other pending criminal proceedings, postpone the handover of above-mentioned property until the conclusion of such proceedings, or temporarily hand over that property on condition that the Requesting Party undertakes to return it.

4. The handover of such property shall not prejudice any legitimate rights or interests of the Requested Party or of any third party to that property. Where these rights or interests exist, the Requesting Party shall return the handed over property free of charge to the Requested Party or the third party as soon as possible after the conclusion of the proceedings.

#### **Article 18**

##### **Transit**

1. When one Party is to extradite a person from a third state through the territory of the other Party, it shall request the other Party for the permission of such transit. No such request is required where air transportation is used and no landing in the territory of the other Party is scheduled.

2. The Requested Party shall, insofar as not contrary to its national law, grant the request for transit made by the Requesting Party.

#### **Article 19**

##### **Notification of Result**

The Requesting Party shall, upon request of the Requested Party, provide the Requested Party promptly with the information on the proceedings or the execution of sentence against the extradited person or information concerning the extradition of that person to a third state.

#### **Article 20**

##### **Expenses**

Expenses arising from the procedures for extradition in the Requested Party shall be borne by that Party. Expenses of transportation and the transit expenses in connection with the handover or takeover of the extradited person shall be borne by the Requesting Party.

#### **Article 21**

##### **Relationship with Other Treaties**

This Treaty shall not prevent the Parties from cooperating with each other on extradition in accordance with other treaties to which both Parties are parties.

**Article 22**  
**Settlement of Disputes**

Any dispute arising from the interpretation or application of the provisions of this Treaty shall be settled by consultation through diplomatic channels.

**Article 23**  
**Entry into Force, Amendment and Termination**

1. Each Party shall inform the other Party by diplomatic note that all necessary steps have been taken under its laws for entry into force of this Treaty. This Treaty shall enter into force upon the thirtieth day from the date of the receipt of the last diplomatic note.

2. Upon the initiative of each Party and by mutual agreement this Treaty may be amended or/and supplemented. All the amendments or/and supplements shall be made in separate protocols. Protocols enter into force in accordance with the order prescribed for the entry into force of this Treaty and are the integral parts of the Treaty.

3. Either Party may terminate this Treaty by notice in writing through diplomatic channels at any time. Termination shall take effect on the one hundred and eightieth day after the date on which the notice is given. Termination of this Treaty shall not affect the extradition proceedings commenced prior to the termination.

4. This Treaty applies to any request presented after its entry into force even if the relevant offences occurred before the entry into force of this Treaty.

**IN WITNESS WHEREOF**, the undersigned, being duly authorized thereto by their respective Governments, have signed this Treaty.

**DONE** in duplicate at Yerevan on this day of 26 May, 2019, in Armenian, Chinese and English languages, all texts being equally authentic. In case of divergence of interpretation, the English text shall prevail.

**FOR THE REPUBLIC  
OF ARMENIA**



**FOR THE PEOPLE'S REPUBLIC  
OF CHINA**



## 亚美尼亚共和国和中华人民共和国引渡条约

亚美尼亚共和国和中华人民共和国（以下称“双方”），  
在相互尊重主权和平等互利的基础上，为促进双方在打击犯罪方面的有效合作，决定缔结本条约，并达成协议如下：

### 第一条 引渡义务

一方有义务根据本条约的规定，应请求方请求，向另一方引渡在其境内发现的被请求方通缉的人员，以便对其进行刑事诉讼或者执行刑罚。

### 第二条 可引渡的犯罪

一、只有在引渡请求所针对的行为根据双方法律均构成犯罪，并且符合下列条件之一时，才能准予引渡：

(一) 为进行刑事诉讼而请求引渡的，根据双方法律，对于该犯罪均可判处 1 年以上有期徒刑或者更重的刑罚；

(二) 为执行刑罚而请求引渡的，在提出引渡请求时，被请求引渡人尚未服完的刑期至少为 6 个月。

二、确定某一犯罪是否根据双方法律均构成可处罚的犯罪时，不应当考虑：

(一) 双方法律是否将构成犯罪的作为或者不作为归入同一犯罪种类或者使用同一罪名；

(二) 犯罪的构成要件根据双方法律是否存在差异，而应当考虑到请求方提交的作为或者不作为的整体性。

三、如果引渡请求涉及两个或者两个以上根据双方法律均构成犯罪的行为，只要其中一项行为符合本条第一款规定的条件，被请求方即可以对所有这些行为准予引渡。

### 第三条 应当拒绝引渡的理由

有下列情形之一的，应当拒绝引渡：

（一）被请求方认为，引渡请求所针对的犯罪是政治犯罪，或者被请求方已经给予被请求引渡人庇护。但恐怖主义犯罪和双方均为缔约国的任一国际公约不认为是政治犯罪的，不应当被视为政治犯罪；

（二）被请求方有充分理由认为，请求引渡的目的是基于被请求引渡人的种族、性别、宗教、国籍或者政治见解而对该人提起诉讼或者进行处罚，或者该人在司法程序中的地位将会因为上述任何原因受到损害；

（三）引渡请求所针对的犯罪仅构成军事犯罪；

（四）根据任何一方的法律，由于时效已过、大赦或者赦免等任何原因，被请求引渡人已经被免于追诉或者免于执行刑罚；

（五）被请求方已经对被请求引渡人就引渡请求所针对的犯罪作出生效判决或者终止刑事诉讼程序；

（六）准予引渡可能会损害被请求方的主权、安全、公

共秩序或者其他重大利益，或者导致与其本国法律基本原则相抵触的后果，包括执行被请求方法律禁止的刑罚种类；

（七）被请求引渡人在请求方曾经遭受或者可能遭受酷刑或者其他残忍、不人道或者有辱人格的待遇或者处罚；

（八）请求方根据缺席判决提出引渡请求，但请求方保证被请求引渡人有机会在其出庭的情况下对案件进行重新审理的除外。

#### 第四条 可以拒绝引渡的理由

有下列情形之一的，可以拒绝引渡：

（一）被请求方根据本国法律对引渡请求所针对的犯罪具有刑事管辖权，并且对被请求引渡人就该犯罪正在进行刑事诉讼或者准备提起刑事诉讼；

（二）被请求方在考虑了犯罪的严重性和请求方利益的情况下，认为由于被请求引渡人的年龄、健康或者其他个人

情况，引渡不符合人道主义考虑。

## **第五条 国民不引渡**

一、双方均有权拒绝引渡本国国民。

二、如果根据本条第一款规定未准予引渡，被请求方应当根据请求方的请求，将该案件提交主管机关以便根据本国法律对该人提起刑事诉讼。为此目的，请求方应当向被请求方提供与该案件有关的文件和证据。

## **第六条 联系途径**

为本条约的目的，请求和所有其他联系应当通过外交途径转递给双方主管机关。

## **第七条 引渡请求及所需文件**



一、引渡请求应当以书面形式提出，并包括或者附有以下内容：

（一）请求机关的名称；

（二）被请求引渡人的姓名、年龄、性别、国籍、身份证件号码、职业、住所地或者居住地以及其他有助于确定该人的身份和可能所在地的资料；如有可能，有关该人外表的描述及其照片和指纹；

（三）有关犯罪事实的说明，包括犯罪的时间、地点、行为和结果；

（四）与该项犯罪的刑事管辖权、定罪和刑罚有关的法律规定；

（五）与追诉时效或者执行刑罚的时效有关的法律规定。

二、除本条第一款规定外，

（一）旨在对被请求引渡人进行刑事诉讼的引渡请求还应当附有请求方主管机关签发的逮捕证（拘留证）的副本；

除本条约另有规定外，通过本条约第六条规定的渠道转递的引渡请求和相关辅助文件，以及对引渡请求的答复文件或者其他材料无需证明或者认证。

## 第十条 临时羁押

一、一方可以在提出引渡请求前，请求另一方临时羁押被请求引渡人。此种请求可以通过本条约第六条规定的途径、国际刑警组织或者双方同意的其他途径以书面形式提出。

二、临时羁押请求应当包括本条约第七条第一款所列内容，并说明已经备有第七条第二款所列文件，以及即将对被请求引渡人提出正式引渡请求。

三、被请求方应当将处理该请求的结果毫不延迟地通知请求方。

四、如果被请求方在羁押被请求引渡人之日起 30 天内

未收到正式引渡请求，则应当解除临时羁押。经请求方合理请求，上述期限可以延长 10 天。

五、如果被请求方随后收到了正式引渡请求，则根据本条第四款解除临时羁押不应妨碍对被请求引渡人的引渡。

### **第十一条 对引渡请求作出决定**

一、被请求方应当根据本国法律规定的程序处理引渡请求，并且立即将决定通知请求方。

二、被请求方如果全部或者部分拒绝引渡请求，应当将拒绝理由告知请求方。

### **第十二条 移交被请求引渡人**

一、如果被请求方准予引渡，双方应当尽快商定执行引渡的时间、地点等有关事宜。同时，被请求方应当将被引渡

人在移交之前已经被羁押的时间告知请求方。

二、如果请求方在商定的执行引渡之日后的 15 天内未接收被请求引渡人，被请求方应当立即释放该人，并且可以拒绝请求方就同一犯罪再次提出的引渡该人的请求，但本条第三款另有规定的除外。

三、如果一方因为其无法控制的原因不能在商定的期间内移交或者接收被请求引渡人，应当立即通知另一方。双方应当再次商定执行引渡的有关事宜，并适用本条第二款的规定。

### **第十三条 重新引渡**

被引渡人在请求方的刑事诉讼终结或者服刑完毕之前逃回被请求方的，被请求方可以根据请求方就同一犯罪再次提出的引渡请求准予重新引渡，请求方无需提交本条约第七条规定的文件和材料。

## 第十四条 暂缓引渡和临时引渡

一、如果被请求引渡人正在被请求方因为引渡请求所针对的犯罪之外的犯罪被提起刑事诉讼或者服刑，被请求方可以在作出准予引渡的决定后，暂缓引渡该人直至诉讼终结或者服刑完毕。被请求方应当将暂缓一事通知请求方。

二、如果暂缓引渡可能对请求方的刑事诉讼造成严重妨碍，被请求方可以在不妨碍其正在进行的刑事诉讼，并且请求方保证在完成有关程序后立即将该被请求引渡人无条件送还被请求方的情况下，根据请求，向请求方临时引渡该人。

## 第十五条 数国提出的引渡请求

当包括一方在内的两个以上国家对同一人就同一犯罪或者不同犯罪提出引渡请求时，被请求方在决定向哪一国引渡该人时，应当考虑所有相关情况，特别是下列情形：

- (一) 请求是否根据条约提出；
- (二) 不同犯罪的严重性；
- (三) 实施犯罪的时间和地点；
- (四) 被请求引渡人的国籍和惯常居住地；
- (五) 各项请求提出的不同时间；
- (六) 再向第三国引渡的可能性。

#### 第十六条 特定规则

除准予引渡所针对的犯罪外，请求方对于根据本条约规定被引渡的人，不得就该人在引渡前所实施的其他犯罪进行刑事诉讼或者执行刑罚，也不能将其引渡给第三国，但是有下列情形之一的除外：

- (一) 被请求方事先同意。为此目的，被请求方可以要求提供本条约第七条所规定的文件或者资料，以及被引渡人就有关犯罪所作的陈述；

(二) 该人在可以自由离开请求方之日起 30 天内未离开该方。但是由于其无法控制的原因未能离开请求方的时间不计算在此期限内；

(三) 该人在已经离开请求方后又自愿回到该方。

### 第十七条 移交财物

一、如果请求方提出请求，被请求方应当在本国法律允许的范围内，扣押在其境内发现的犯罪所得、犯罪工具以及可作为证据的其他财物，并且在准予引渡的情况下，将这些财物移交给请求方。

二、在准予引渡的情况下，即使因为被请求引渡人死亡、失踪或者脱逃而无法实施引渡，本条第一款提及的财物仍然可以移交。

三、被请求方为进行其他未决刑事诉讼，可以推迟移交上述财物直至诉讼终结，或者在请求方承诺返还的条件下临

时移交这些财物。

四、移交上述财物不得损害被请求方或者任何第三方对该财物的合法权益。如果存在此种权益，请求方应当在诉讼终结之后尽快将被移交的财物无偿返还给被请求方或者该第三方。

## 第十八条 过 境

一、一方从第三国引渡人员需经过另一方领土时，应当请求另一方同意过境。如果使用航空运输并且没有在另一方境内降落的计划，则无需提出过境请求。

二、被请求方在不违反本国法律的情况下，应当同意请求方提出的过境请求。

## 第十九条 通报结果



请求方应当根据被请求方的要求，立即向被请求方提供有关对被引渡人进行刑事诉讼、执行刑罚或者将该人引渡给第三国的情况。

## 第二十条 费用

在被请求方的引渡程序中产生的费用应当由被请求方承担。与移交和接收被引渡人有关的交通费用和过境费用应当由请求方承担。

## 第二十一条 与其他条约的关系

本条约不影响双方根据双方均为缔约方的其他条约开展引渡合作。

## 第二十二条 争议的解决

由于本条约规定的解释或者适用所产生的任何争议，应当通过外交途径协商解决。

## 第二十三条 生效、修订和终止

一、一方根据本国法律完成本条约生效所需的一切必要程序后，应当通过外交照会通知另一方。本条约自后一份外交照会收到之日起第 30 天生效。

二、一方提起且经双方同意后，本条约可以进行修订或者/和补充。所有修订或者/和补充应当作为单独的议定书。议定书生效程序与本条约生效程序相同，并构成本条约的一部分。

三、任何一方可以随时通过外交途径以书面形式通知终止本条约。本条约自该通知发出之日后第 180 天终止。本条

约的终止不影响条约终止前已经开始的引渡程序。

四、本条约适用于其生效后提出的任何请求，即使有关犯罪发生于本条约生效前。

下列签署人经各自政府适当授权，签署本条约，以昭信守。

本条约于\_\_\_\_年\_\_月\_\_\_\_日订于\_\_\_\_，一式两份，每份均用亚美尼亚文、中文和英文写成，三种文本同等作准。如遇解释上的分歧，以英文本为准。

亚美尼亚共和国代表



中华人民共和国代表



Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019թ. մայիսի 26-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև հանձնման մասին» պայմանագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարության  
միջազգային պայմանագրերի և  
իրավունքի վարչության պետի պ/կ՝**



**Տիգրան Գալստյան**